

«ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ԾԱՌ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԻԳ ԾԱՌԸ

Ա. Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հաճախապատում ժողովածուի 23-րդ ճառը՝ «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի խրատք ճգնութեան եւ ցոյցք հանդիսից որ յառաքինութեան յորդորմունս»-ը, բանասերներն ավելի հաճախ են քննարկել, քան ժողովածուի որևէ այլ ճառ: Նման ուշադրության պատճառը ուղղափառ ժողովներին վերաբերող մի հատված է, որը փոքր-ինչ ձևափոխված ճշում է Քաղկեդոնի V կանոնը. «Ամենայն ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց, որ զուղղափառ հաւատսն հաստատեցին և կանոն սահմանեցին եկեղեցոյ, և զայս սահմանեցին ճշովիք...»¹: Բանասերների կարծիքով՝ այն վկայում է Հաճախապատումի հեղինակի քաղկեդոնական լինելու մասին: Այսպես, Հ. Վ. Հացունին²՝ անդրադառնում է այն փաստին, որ վանական կանոնները առնչվել են Քաղկեդոնի և Բ. Նիկիական ժողովներին, որից ենթադրում է, որ ճառերի հեղինակը եղել է քաղկեդոնական: 787 թ. Բ. Նիկիական ժողովին առնչված վանական կանոնների կիրառությունը անհավանական է, քանզի հայերը խզել էին իրենց հարաբերությունները հույների հետ սկսած V-VI դարերից: Հարկ է նշել նաև, որ, ի տարբերություն Քաղկեդոնի ժողովի և Հաճախապատումի, Բ. Նիկիական ժողովը չունի ճշովքներ: Հ. Վ. Հացունին, ելնելով վերոհիշյալ հանգամանքից, առաջարկում է շատ յուրահատուկ մի տեսություն, համաձայն որի հայ եկեղեցին եղել է քաղկեդոնական մինչև 591 թվականը (ինչպես և կիլիկյան շրջանում): Նա նույնիսկ հաշվի չի առնում այն վարկածը, որ այդ հատվածը կարող է հետագա դարերի հավելում (ինտերպոլացիա) լինել: Հացունին՝ որպես կաթողիկ հոգևորական, գտնում է, որ Հաճախապատում ճառի հեղինակը ընդունում էր քաղկեդոնական պատկերացումները:

Նա զուգահեռներ է անցկացնում Հաճախապատումի և 768 թ. Սիոն կաթողիկոսի գումարած Պարտավի ժողովի միջև. ըստ մեզ՝ այդ կապը նույնքան հավանական էր, որքան 19 տարի հետո գումարված Բ. Նիկիական ժողովի հետ կապը: Ուշագրավ է նաև «ժողովք»-ի հոգնակի լինելը, որին Հացունին չի տալիս ոչ մի տրամաբանական բացատրություն. «Եթէ Քաղկեդոնի ժողովը Յաճախապատումի գրութեան ժամանակ առաջին ու միակ տիեզերական էր, որ դրել էր վանական վանափոխութեան արգելքը, ինչո՞ւ և ի՞նչ տրամաբանութեամբ «ամենայն ժողովոց «վերագրէր զայն հայ հեղինակը: Եթէ պարզաբեր է «ժողովք» ըսէր, տակաւին կարելի էր ճարտասանական ձև մը համարիլ, և անորոշ յոգնականին մէջ եզակի միտք մ'իմանալ: Բայց ամենայնը կ'ընդհանրացնէ և իսկապէս կը յոգնականացնէ ժողովքը: Որով մենք չենք կրնար սխալիլ, հետագայ ձեռքէ մը խանգարուած համարելով զայդ, և ենթադրելով այսպիսի սկզբնագիր մը. «Ուղղափառ ժողովն եպիսկոպոսաց ի Քաղկեդոն, որ զուղղափառ հաւատսն հաստատեաց և կանոն սահմանեաց եկեղեցոյ, և զայս սահմանեաց ճշովիք»³: Այսպես է Հացունին մեկնաբանում ԻԳ ճառը: Դժվար չէ նկատել, որ կաթողիկ ըմբռնումները ամբողջովին կանխորոշել են իր գիտական հայացքները: Այն, որ Հաճախապատումը չի կարող քաղկեդոնական լինել, երևում է ճառի առաջին իսկ տողից՝ «Մի է բնութիւն գոյութեան...»⁴, կամ «Մի է բնութիւն նոցա

¹ Ա. Տեր-Միքելեան, Յաճախապատում ճառք, Էջմիածին, 1894, էջ 212:

² Հ. Վ. Հացունի, Երբ շարադրած են «Յաճախապատում ճառք», «Բազմավէպ», Վենետիկ, 1930, էջ 401:

³ Նույն տեղում:

⁴ Խոսքը Աստվածային բնութեան մասին է, տե՛ս Ա. Տեր-Միքելեան, Յաճախապատում..., էջ 1:

և մի անփոփոխ իսկություն և մի արարչություն...»⁵: Պատահական չէ, որ նա հատուկ ուշադրություն է դարձնում ԻԳ ճառին՝ համոզված լինելով, որ այն ցույց էր տալիս Հաճախապատումի քաղկեդոնական ծագումը:

Ա. Ն. Սրապյանը, անդրադառնալով Հաճախապատումին, ուշադրություն է դարձնում Պ. Ֆեթերի, Ս. Վեբերի, Կ. Տեր-Մկրտչյանի, Ա. Ջամիլյանի, Մ. Աբեղյանի և Ն. Ակիմյանի տեսակետներին:

Ըստ Սրապյանի՝ ԻԳ ճառի հատվածը ավելի շուտ վկայում է երեք Տիեզերածողուների կատարված լինելու մասին. «Կանոնը վերաբերում է վանականությանը: Այս հանգամանքը և ուղղափառությունը հաստատող բոլոր ժողովների վկայակոչությունը ցույց են տալիս, թե ճառը գրված է 431 թ., այսինքն՝ ամենայն ուղղափառ ժողովներից հետո, այն էլ որոշ ժամանակ անց, որպեսզի հնարավոր լիներ անդրադառնալ եղած արդյունքներին»⁶: Սակայն Սրապյանը չի բացատրում իր մոտեցումը՝ ինչո՞ւ 431 թ., չէ՞ որ առաջին երեք Տիեզերածողուները (այդ թվում նաև 431 թ. Եփեսոսինը) չունեն վանական կանոններ:

ԻԳ ճառը բաղկացած է երկու հատվածից: Առաջինը ներածական հատվածն է, ուր խոսքը ընդհանուր բարոյական սկզբունքների մասին է, որոնցով պետք է առաջնորդվի քրիստոնյա վանականը: Ժառը սկսում է զգուշության կոչից, որը չպետք է մոռանա վանականը: Իճքնին ճառի բովանդակությունը վկայում է, որ Հաճախապատումը խմբագրվել է V դարի կեսերին, երբ վանականությունը ծաղկում էր ապրում ողջ արևելքում. «Բայց դու, ով անձն, որ ընծայեցար Աստուծոյ, մի զնա քեզ խորհրդակից առնոյր. այլ մարտիր զբարիքն մարտն և բուռն հար զայտցիկ խրատուց, ամսոռաց ունելով զախոյեանն սուրբ ճգնավորաւ...» (էջ 249): Այստեղ առկա են նաև որոշ վարչական հրահանգներ⁷. «Եւ որ վերակացուն է զգաստ լիցի առ մերձաւորս և նախատես առ հեռաւորն. խրատել զեղբայրս... Եւ հաւանել ամենեցուն ի կամս առաջնորդին եղբայրութեանն ոչ ինչ ի գործելացն առանց կամաց նորա եղիցի» (էջ 253):

Երկրորդը հենց այն հատվածն է, որ տեղիք է տվել բանասերներին ենթադրելու, որ այս ճառը ունի քաղկեդոնական ուղղվածություն և գրվել է հետքաղկեդոնական շրջանում:

Անհրաժեշտ ենք համարում Ոչել, որ իրոք ճառի այս հատվածը քաղված է Քաղկեդոնի ժողովի կանոններից.

Հաճախապատում (Ժառ ԻԳ)

Քաղկեդոնի (Հատված V)

«Եղբայր ոք, ասէ, մի իշխեսցէ ի վանացն ելանել կալ ուր և կամեսցի առանց կամաց առաջնորդին...» (էջ 254, 256):

«Վանականները ամեն քաղաքում... թողնելով իրենց վանքերը... միայն եթե թույլ տրվի առաջնորդի կողմից...» (էջ 26):

Համեմատությունից երևում է, որ Հաճախապատումի խմբագրողը ծանոթ է եղել Քաղկեդոնի կանոններին, այսինքն՝ խմբագրության գործը կատարել է 451 թ. ոչ շուտ: Սակայն պետք չէ մոռանալ հետագա հավելումի վարկածը, որը չի բացատրում միայն այս կանոնի առկայությունը: Իրոք, եթե Քաղկեդոնի ժողովի կանոնը ներմուծված է հետագայում, ապա ինչու ներմուծված չեն ավելի «կարևոր» դավանաբանաքրիստոսաբանական հատվածներ: Ավելի հավանական է, որ այս հատվածը ներմուծում չէ և գրվել է խմբագրողի կողմից Քաղկեդոնի ժողովից հետո, երբ վարչական որոշումները, ի տարբերություն վարդապետականների, արդեն ընդունվել էին հայ միջավայրում:

Հաճախապատումի մասին արժեքավոր տեղեկություն կա Ղազար Փարպեցու աշխատությունում⁸, որը, անդրադառնալով Գրիգոր Լուսավորչի ավանդած վարդապետությանը,

⁵ Խոսքը Ա. Երրորդության Անձերի մեկ Աստվածային բնության մասին է, տե՛ս Ա. Տեր-Միքելեան, Յանախապատում..., էջ 4:

⁶ Ա. Ն. Սրապյան, «Յանախապատում» ճառերի հեղինակի հարցը, «ՀՍՄԻ ԳԱ տեղեկագիր», № 5, 1962, էջ 29:

⁷ «Կանոնք Ա. Գրիգորի», Կանոնագիրք Հայոց, հատոր Ա, հրատ. Վազգեն Հակոբյանի, Եր., 1964, էջ 179:

⁸ Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմագիրք Հայոց, Տփղիս, 1904:

գրել է. «Ոչ հաւասարեալ հանգոյն էին կանոնի ու վարդապետութեան հրեշտակակրօն կարգավօրութեամբ սրբոյ նահատակին Գրիգորի, որով վարժեալ զամենեսեան սնոյց և հաստատեաց ըստ վերին քաղաքավարութեան...» (էջ 26): Սահակ Պարթևի մասին հատվածում Փարպեցու երկուն կարողում ենք. «...պատվիրեաց ճոցս պահել զվարդապետութիւն պատուիրանի սրբոյն Գրիգորի, զոր ուսուց և աւանդեալ ճշմարտութեամբ ամենայն աշխարհիս հայոց...» (էջ 37): Այստեղ խոսքը Հաճախապատումի մասին է, քանի որ Ագաթանգեղոսի պատմության մեջ տեղ գտած վարդապետության մասին ասվում է. «Իսկ զժառանգութիւն գրելոյս սուրբ արանցն, զորս ի Պատմութիւն նահատակին Գրիգորի յիշատակէ...» (էջ 203): Էական է, որ Փարպեցին «վարդապետութեան» մասին գրում է. «որով վարժեալ զամենեսեան սնոյց» և «հաստատեաց»՝ ցույց տալով այն դերը, որ կատարել են ճաները հայ ժողովրդի պատմության մեջ: Սերբոս պատմիչը, նկարագրելով Հայաստանի իրավիճակը և քրիստոսաբանական վեճերը VI դարի կեսերին⁹, իր աշխատության մեջ անդրադառնում է ս. Գրիգորին, որը «ի Կեսարիա սնեալ և ունեալ վարդապետաց մեր» և նրա վարդապետությանը. «Եւ տեսին զհրամանս թագաւորին, և լուսն զբանս փիլիսոփային, որ ուսուցանէր զԵրրորդութիւնն բաժանմամբ ըստ տումարին Լևոնի: Եւ իբրև լուսն չառին յանձն փոխել զճշմարիտ, վարդապետութիւն սրբոյն Գրիգորի՝ ըստ տումարին Լևոնի...» (էջ 48): Մեկ այլ հատվածում, խոսելով հայ և հույն միջեկեղեցական խնդիրների մասին, երբ հայ եպիսկոպոսները հավատարմություն են դրսևորել հայավանդության նկատմամբ, գրում է. «Դիպեցան անդ արք երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք... ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի...» (էջ 150): Նկատի ունենալով Պարսից Խոսրով արքայի կազմած եկեղեցական ժողովը, որին, ի թիվս իրավիրված այլ նվիրապետերի, մասնակցեցին Կոմիտաս Մամիկոնեցի և Մատթևոս Ամատունեաց եպիսկոպոսները, որոնք ներկայացրին «Գիրք սրբոյն Գրիգորի» աշխատությունը: Գրքի բովանդակության մասին խոսվում է մեկ այլ տեղ. «Եւ հրամայեաց թագաւորին հարցանել, եթէ յորո՞ց թագաւորաց ժամանակս եղեն ժողովքդ այրոքիկ: Եւ ճոքս ասացին, եթէ Նիկիոյ ժողովն առ Կոստանդիանոսի եղև, իսկ Կոստանդնուպոլսին առ Թէոդոսի Մեծի, և Եփեսոսին առ Փոքր Թէոդոսի, և Քաղկեդոնին առ Մարկիանոսի» (էջ 324):

Ըստ Սերբոսի՝ ս. Գրիգորի վարդապետության գիրքը բազմիցս օգնել է հայ եկեղեցուն դավանաբանական վեճերի ժամանակ: Կարող է տպավորություն տեղծվել, որ այստեղ խոսքը Ագաթանգեղոսի գրքում տեղ գտած վարդապետության մասին է, սակայն դա քիչ հավանական է, քանի որ այդ վարդապետությունը Ագաթանգեղոսի պատմությունից առանձին չի դիտվել: Անանիա Օիրակացին «Ժամանակագրության» մեջ¹⁰ մի առիթով ակնարկում է Գրիգոր Լուսավորչի գրական աշխատությունը. «Ինկղետիանոս ամս քսան եւ երկուս, ետ Հիպատիս ժ եւ մեռաւ ի Դալմատիա: Առ որով հալածումն եկեղեցեաց. եւ կենարար վարդապետութիւնն Քրիստոսի պատմեցաւ հայոց՝ ի ձեռն սուրբ Գրիգորի Պարթևի վարդապետությունը, որ անվանվել է «կենարար վարդապետութիւնն Քրիստոսի»: Սակայն (այստեղ ճշված է «վարդապետութիւն») Անանիա Օիրակացու հատվածը կարելի է վերագրել և՛ Հաճախապատումին, և՛ վարդապետությանը: Ժատ էական է, որ արդեն Օիրակացին խնդր առարկա երկին տվել է այսպիսի բարձր՝ «կենարար» բնութագրություն: Հովհաննես Դրասխանակերտցին հստակ չի ճշում Գրիգորի վարդապետության մասին, բայց ակնարկում է Գրիգոր Լուսավորչի ավանդության մասին, որը հայ եկեղեցու դավանաբանական հիմքն է. «Իսկ ապա զկնի ի սմին յայսմ ժամանակի... խոսեցին զժողովն Քաղկեդոնի... ի սմին հիման սրբոյն Գրիգորի հաստատեալ կացին»¹¹: Այստեղ ամենայն հավանականությամբ խոսվում է Հաճախապատում ճաների մասին, որտեղ առաջին երեք գլուխները նվիրված են դավանաբանական (Երրորդաբանական) հարցերին:

⁹ Տե՛ս «Պատմութիւն Սերբոսի», աշխատասիրության մ. Վ. Արգարյանի, Եր., 1979:

¹⁰ Տե՛ս «Օիրակացու Մատենագրությունը», կազմող՝ Ա. Արքահամյան, Եր., 1994:

¹¹ «Ծովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 62:

Մովսես Կաղանկատվացին նշում է հայ եկեղեցու ավանդությունը՝ «Մեր հայերը ընդունեցին Սուրբ Գրքից՝ Հիմ ու Նոր կտակարաններից, Սուրբ Գրիգորի, Նիկիայի երեք հարյուր տասնութի...»¹²:

Այս հատվածը վկայում է «Սուրբ Գրիգոր» անունով երկի բարձր հեղինակության մասին՝ համեմատելով Նիկիայի Հավատո Հանգամակի (Credo) հետ: Մեկ այլ տեղ Կաղանկատվացի հեղինակը գրում է. «Իսկ Հայոց Աշոտ իշխանը պահանջում էր Սուրբ Գրիգորի դրած կարգ ու կանոնով վարվել ու ձեռնադրություն Հայաստանից» (էջ 262): Տվյալ երկու տեղեկությունները կարելի է վերագրել Հաճախապատումին վերապահումով, քանի որ այստեղ նույն հավանականությամբ կարող է խոսվել Գրիգոր Լուսավորչի ավանդած կանոնների մասին, որոնք վկայել է դեռ Գրիգոր Մագիստրոսը: Նա, անդրադառնալով Գրիգոր Լուսավորչի ավանդած գրականությանը, հատուկ մատնանշում է Հաճախապատումը. «Զգիրսն իր հաւատոյ Յաճախաբանն որ անուանին»¹³: Մաղաքիա Օրմանյանը նշում է. «Հարկաւ նոյն դիտողութիւնը պէտք է տարածել նաև Լուսավորչի անուամբ մեզի հասած Յաճախապատում գիրքին համար, որ 23 ճառեր կը պարունակէ, և հաւատոյ և քրիստոնէավայել վարուց վերաբերյալ կէտերը հեղինակօրէն կը բացատրէ: Պատմութիւնն ալ գիտէ թէ Գրիգոր ասանդեաց ճառս յաճախագոյնս դժվարապատումս առակս խորիմացս դիրաւուրս, բայց հնար չէ կարծել որ հայերեն լեզուով գրած ըլլան, նոյն իսկ օտար տառերով գրուած հայերէն ալ ենթադրելով»¹⁴: Ինչպես երևում է, Օրմանյան հեղինակը ընդունում է Հաճախապատումի հեղինակ Գրիգոր Լուսավորչին, սակայն չի պարզաբանում այսպիսի մտնեցման հիմնական դրույթները:

Այսպիսով, պատմիչները միաձայն վկայում են. Հաճախապատումի ուղղափառության և հայ եկեղեցու պատմության մեջ ժողովածուի հսկայական դերի մասին: Բնական է, որ քաղկեդոնական (դավանաբանական) ուղղվածությունը ամբողջովին բացառվում է: Այս հանգամանքներից ենթադրվում է, որ խնդրո առարկա ճառի քաղկեդոնական հատվածը մեջբերվել է զուտ վարչական նկատառումներով և կապ չունի Քաղկեդոնի դավանաբանության հետ: Այս ճառի մեջ, բացի «քաղկեդոնական» հատվածից, արծարծված են մի շարք խնդիրներ՝ կապված եկեղեցու վարչական հսկողության հետ. «Եւ հասարակաց պաշտօնն մի պատճառանօք ինչ խափանեցի, բայց եթէ ի պէտս ինչ եկեղեցոյն զբաղեալ հրամանաւ վերակացուիս. սակաւ և անդ կատարեսցի աղօթքն... Եւ տեսուչք հիրոցն մի անտես առնել զկարօտեալսն... Եւ եղիցի վերակացուն հայր բարեմիտ, բարեխոհ և բարեգործ... Եւ զի վերակացուն հայր հոգևոր կոչեցաւ» (էջ 256):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել՝ ԻԳ ճառը վկայում է, որ Հաճախապատում ժողովածուն ստեղծվել է 451 թ. ոչ շուտ և պարունակում է Քաղկեդոնի V (վանականների) վերաբերող) վարչական որոշումը: Սակայն դա որևէ կերպ չի հակասում ժողովածուի վարդապետությանը, որը դարեր շարունակ եղել է Հայ առաքելական եկեղեցու հիմնական աստվածաբանական երկերից մեկը:

А. Л. ОВСЕПЯН - 23-я глава сборника "Многовещательные речи" ("Ачакхатум"). - Автор статьи, исследуя 23-ю главу "Ачакхатума", приходит к выводу, что время написания сборника - это вторая половина V века. Содержание 23-й главы, как и всего сборника, свидетельствует о монофизитской ориентации Армянской церкви уже с конца V века.

¹² Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից Աշխարհի, Եր., 1969, էջ 93:

¹³ «Տաղասացություններ», Վեներիկ, 1868, էջ 72:

¹⁴ Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 8: